ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն.

1) ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, միջազգային մրցույթների դափնեկիր, ռեժիսոր, սցենարիստ, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից Էլմիրա Հեքեքյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.26 հասցեում փակցնելու համար,

2) ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, քանդակագործ Թերեզա Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու համար,

3) ազատամարտիկ, գնդապետ Ռոլանդ Քելեշյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.17/1 հասցեում փակցնելու համար.

4) ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.16 հասցեում փակցնելու համար,

5) ՀՀ վաստակավոր ճարտարապետ Մարտին Թովմասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ.3 հասցեում փակցնելու համար,

6) ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Վարդան Մուսախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց հ.4 հասցեում փակցնելու համար,

7) հայ օպերային երգիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վահան Միրաքյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց հ.29 հասցեում փակցնելու համար,

8) բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Հրաչյա Սաղաթելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.62 հասցեում փակցնելու համար,

9) ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի Հրաչյա Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սունդուկյան փողոցի հ.26 հասցեում փակցնելու համար,

10) ՀԽՍՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության դոկտոր Տիրան Մարությանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, միջազգային մրցույթների դափնեկիր, ռեժիսոր, սցենարիստ, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից **Էլմիրա Հեքեքյանը** ծնվել է 1928 թվականի փետրվարի 29-ին, Գանձակում:

1949 թվականից աշխատել է Հայաստանի հանրային ռադիոյի խմբագրությունում: 1953 թվականից (ընդհատումներով) դասավանդել է Երևանի պարարվեստի, երաժշտական ուսումնարաններում, ԵԹԱԻ-ում: Բեմադրել է 20 հեռուստատեսային ներկայացում, հեղինակել և բեմադրել է մոտ 50 հաղորդաշար, 200-ից ավելի հեռուստասցենար:

Էլմիրա Հեքեքյանը մահացել է 2019 թվականին:

Էլմիրա Հեքեքյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կինյան փողոց հ.26 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի գեղարվեստական ղեկավար Տիգրան Հեքեքյանի կողմից:

ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, քանդակագործ **Թերեզա Միրզոյանը** ծնվել է 1922 թվականի օգոստոսի 11-ին:

1939 թվականին ավարտել է Թբիլիսիի Անդրկովկասյան ճարտարապետության ուսումնարանը, 1946 թվականին՝ Գեղարվեստի ակադեմիան:

1947-1968 թվականներին միաժամանակ դասավանդել է Երևանի գեղարվեստի ուսումնարանում և Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:

Թերեզա Միրզոյանը ստեղծագործել է հաստոցային և մոնումենտալ քանդակագործության բնագավառներում: Նրա արվեստում գերիշխում են սիրո, մայրության և գարնան թեմաները: Նա հանդիսանում է ավելի քան հարյուր քանդակների հեղինակ: Նրա կերտած բազմաթիվ մոնումենտալ աշխատանքները տեղադրված են հանրապետության տարբեր քաղաքներում:

Թերեզա Միրզոյանը մահացել է 2016 թվականին:

Թերեզա Միրզոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանի կողմից:

Ազատամարտիկ, գնդապետ **Ռոլանդ Քելեշյանը** ծնվել է 1950 թվականի դեկտեմբերի 29-ին, Գյումրիում:

Ավարտել է Դոնի-Ռոստովի ժողտնտեսության ինստիտուտը, հետագայում նաև՝ բարձրագույն հրամանատարական ռազմական ակադեմիան: Եղել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության մարտական գործողությունների մասնակից, «Արծիվ-28» կամավորական ջոկատի լեգենդար հրամանատար և մեծ ներդրում է ունեցել ՀՀ զինված ուժերի ստեղծման ու կայացման կարևորագույն գործում: Հետագայում եղել է 1-ին մոտոհրաձգային բրիգադի հրամանատարի տեղակալ, 58831 զորամասի (Արարատ) գնդի հրամանատար, ՀՀ ՊՆ փոխնախարարի աշխատակազմի ղեկավար, ՌԴ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչներից մեկը և Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի պետ:

Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի, «Արիության», «Մարտական ծառայության», «Անդրանիկ Օզանյան»,

«Վազգեն Սարգսյան» և «Մարշալ Բաղրամյան» մեդալներով, անվանական զենքով, պատվոգրերով:

Ռոլանդ Քելեշյանը մահացել է 2019 թվականին:

Ռոլանդ Քելեշյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.17/1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Արթուր Քելեշյանի կողմից:

Ակադեմիկոս **Բաբկեն Առաքելյանը** ծնվել է 1912 թվականի փետրվարի 1-ին, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղում:

1930-ական թվականների կեսերին սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1936 թվականին դարձել է Լենինգրադի համալսարանի ազատ ունկնդիր: 1938 թվականին ընդունվել է Արմֆանի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և ուսումնառության մի մասն անցկացրել Լենինգրադում՝ Հովսեփ Օրբելու գիտական ղեկավարությամբ: 1941 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն նվիրված հայ միջնադարյան պատկերաքանդակների հետազոտությանը: 1947 թվականին Առաքելյանը եղել է հասարակական գիտությունների «Տեղեկագիր» ամսագրի խմբագիրը, 1949 թվականին վարել է ՀԳԱ պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժինները: 1954 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում» երկհատոր մենագրությունը և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան: 1957 թվականին նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1959-1990 թթ. նա եղել է իր իսկ հիմնադրած ՀԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Երկար տարիներ ղեկավարել է Գառնու, Արմավիրի, Հին Արտաշատի հնագիտական պեղումների աշխատանքները:

1968 թվականին ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, իսկ 1974 թվականին՝ ակադեմիկոս: 1982-1990 թվականներին գլխավորել է ակադեմիայի պատմության և տնտեսագիտության բաժանմունքի աշխատանքները:

Նա հեղինակ է ավելի քան 120 գիտական մեծ ու փոքր աշխատությունների: «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյա ակադեմիական հրատարակության համահեղինակներից է:

Բաբկեն Առաքելյանը մահացել է 2004 թվականին, թաղված է Երևանի քաղաքային պանթեոնում:

Բաբկեն Առաքելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.16 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացիներ Անահիտ և Հրանտ Առաքելյանների կողմից:

Հայաստանի վաստակավոր ճարտարապետ **Մարտին Թովմասյանը** ծնվել է 1925 թվականի մարտի 5-ին Երևանում:

1949 թվականին ավարտել է Բաքվի ինդուստրիալ և 1955 թվականին՝ Մոսկվայի ճարտարապետական ինստիտուտները: 1970 թվականից դասավանել է ԵՊՃՇՀ-ում (պրոֆեսոր՝ 2002 թվականից):

1955-1969 թվականներին աշխատել է Բաքվի նախագծային կազմակերպություններում:

1969-1989 թվականներին եղել է «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետության, ապա՝ գլխավոր հատակագծի արվեստանոցների ղեկավարը, 1989-1996 թվականներին՝ փոխտնօրենը:

Մարտին Թովմասյանի նախագծերով Երևանում իրականացվել են Հարավ-արևմտյան, Արևմտյան միկրոշրջանների կառուցապատումը, Նուբարաշենի գլխավոր հատակագիծը, Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանի վարչական շենքը և այլն:

Մարտին Թովմասյանը նշանակալի մասնակցություն է ունեցել Երևանի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներում:

Աշխատանքին զուգահեռ դասավանդել է Հայաստանի ճարտարապետա-շինարարական ազգային համալսարանում: «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» մենագրության համահեղինակն է:

2007 թվականին արժանացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետի կոչմանը:

Մարտին Թովմասյանը մահացել է 2008 թվականին:

Մարտին Թովմասյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ.3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահ Մ. Մինասյանի և ՀՀ քաղաքացի Լևոն Թովմասյանի կողմից:

ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու **Վարդան Մուսախանյանը** ծնվել է 1919 թվականի հունիսի 18-ին, Երևանում:

Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ 1939 թվականին մեկնել է խորհրդային բանակ: 1941-1942 թվականներին մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին և ծանր վիրավորվելուց հետո զորացրվել է: 1942-1946 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետում:

Որպես ժողովրդական քննիչ երկու տարի աշխատել է Երևանում: 1948 թվականին ընդունվել է ասպիրանտուրա՝ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: 1956 թվականին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայկական ՍՍՀ իշխանության տեղական մարմինները» թեմայով:

Վարդան Մուսախանյանը մանկավարժական աշխատանքի է անցել համամիութենական իրավաբանական հեռակա ինստիտուտի Երևանի մասնաճյուղում, նախ որպես դասախոս, ապա՝ մասնաճյուղի տնօրեն:

1954-1956 թվականներին զբաղեցրել է համալսարանի՝ երեկոյան և հեռակա ուսուցման գծով պրոռեկտորի պաշտոնը, իսկ 1970-1974 թվականներին եղել է իրավաբանական ֆակուլտետի դեկանը: 1963-1964 թվականներին եղել է ԵՊՀ-ի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղարը:

1956 թվականի հուլիսի 1-ից նշանակվել է Երևանի Վ.Մ.Մոլոտովի անվան պետական համալսարանի հեռակա իրավատնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարը:

Հայկական սովետական հանրագիտարանում տպագրվել են նրա շուրջ երկու տասնյակ հոդվածները՝ նվիրված պետության և իրավունքի հարցերին:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով Վարդան Մուսախանյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Աշխատանքի վետերան» մեդալով: Վարդան Մուսախանյանն առաջիններից է եղել, ով արժանացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի կոչմանը:

Վարդան Մուսախանյանը մահացել է 2001 թվականին:

Վարդան Մուսախանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց հ.4 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Երևանի պետական համալսարանի ռեկտորի և Վարդան Մուսախանյանի որդի՝ Լևոն Մուսախանյանի կողմից:

Հայ օպերային երգիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ **Վահան Միրաքյանը** ծնվել է 1936 թվականի ապրիլի 27-ին, Երևանում:

1953 թվականին ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա՝ պրոֆեսոր Թամարա Շահնազարյանի դասարան: 1956 թվականին

հրավիրվել է Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն։

1963-1967 թվականներին վերապատրաստվել է Միլանում՝ մաեստրո Ջ. Բարիի ղեկավարությանբ։ Միլանի «Լա Սկալա» թատրոնում և Պարմայում հանդես է եկել համերգային մեծ ծրագրով։

1967-1980 թվականներին եղել է Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատար։

1981-2005 թվականներին ապրել և ստեղծագործել է Ավստրիայում, դասավանդել Վիեննայի կոնսերվատորիայում։ 1983 թվականին Վինչենցո Բելլինիի «Նորմա» օպերայում աշխարհահռչակ երգչուհի Մոնտսերատ Կաբալիեի հետ կատարել է Պոլիոնի դերերգը։

Ելույթներ է ունեցել նաև Վիեննայի, Համբուրգի, Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» և այլ օպերային թատրոններում, հանդես եկել նաև որպես կամերային երգիչ։

2002 թվականին համերգային ծրագրով Երևանում հանդես է եկել որդու՝ օպերային երգիչ, տենոր Արմեն Միրաքյանի հետ։

2005 թվականից ապրում և ստեղծագործում էր ԱՄՆ-ում։

Մահացել է Լոս Անջելեսում, 2014 թվականի մայիսի 6-ին։

Վահան Միրաքյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց հ.29 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նախկին տնօրեն Ա. Արզումանյանի և ՀՀ քաղաքացի Վարդան Միրաքյանի կողմից։

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ **Հրաչյա Սաղաթելյանը** ծնվել է 1904 թվականին։

1929 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը։ 1946 թվականից աշխատել է Բարդուղիմեոս Ֆանարջյանի հետ կազմակերպած Երևանի Ռենտգենաբանության և ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտում, 1958-1979 թվականներին եղել է Ռենտգենախտորոշման բաժանմունքի, 1954 թվականին՝ Հյուսիս-Օսեթական պետական բժշկական (Օրջոնիկիձե) ռենտգենաբանության ինստիտուտի ամբիոնի վարիչ, 1957 թվականից համանուն ամբիոն է կազմակերպել Դուշանբեի բժշկական ինստիտուտում։

Եղել է Ռենտգենաբանների և ուռուցքաբանների հայկական գիտական ընկերության փոխնախագահ, ռենտգենաբանների միութենական գիտական ընկերության պատվավոր անդամ։

Հրաչյա Սաղաթելյանը մահացել է 1979 թվականին։

Հրաչյա Սաղաթելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ.62 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Հրաչյա Սաղաթելյանի կողմից։

ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի **Հրաչյա Աշուղյանը** ծնվել է 1938 թվականի հոկտեմբերի 7-ին, Թբիլիսիում։

1963 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը, 1967 թվականից դասավանդել է գեղարվեստաթատերական ինստիտուտում, 2002 թվականից պրոֆեսոր է։

1963-1975 թվականներին աշխատել է Երևանի Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ որպես ռեժիսոր, 1975 թվականից՝ Հայկական հեռուստատեսության հեռուստաթատրոնում՝ որպես ռեժիսոր, հետագայում՝ գլխավոր ռեժիսոր, 1992-2017 թվականներին դասավանդել է Երևանի Խաչատուր Աբովյանի

անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետում:

Հրաչյա Աշուղյանը մահացել է 2019 թվականի մայիսի 13-ին, Երևանում:

Հրաչյա Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոց հ.9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա ընտանիքի կողմից:

ՀԽՍՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության դոկտոր **Տիրան Մարությանը** ծնվել է 1911 թվականի նոյեմբերի 24-ին, Ղարաքիլիսայում:

1937 թվականին ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, 1935 թվականից եղել է Հայաստանի ճարտարապետների միության անդամ:

1939 թվականից աշխատել է «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտում (1952 թվականից՝ գլխավոր ճարտարապետ): Հեղինակ է Սևանի (վերերկրյա մասի), Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնու, Երևանի, Տաթևի ու Բուի (Գանայի հանրապետությունում, վերջին երկուսը՝ Ռ. Ա. Յագուբովի և Ս. Բ. Պետրոսյանի հետ), Շամբի, Սպանդարյանի, Զարամագի 1-ին և 2-րդ (Հյուսիս-Օսեթական ԻԽՍՀ), նաև գյուղական շուրջ 10 ՀԷԿ-երի համալիրների ճարտարապետական մասի:

Մարությանի նախագծերով ստեղծվել են 250-ից ավելի կառույցներ, այդ թվում՝ մշակույթի տներ և ակումբներ, աղբյուր-հուշարձաններ, ուսումնական, մանկական և առողջապահական հաստատություններ, բնակելի տներ (Երևանի Ազատության պողոտայի սկզբնամասում, Մոսկովյան և Դեմիրճյան փողոցներում), մեծ թվով գյուղական և ավանային բնակավայրեր՝ Լուսավան (այժմ՝ Չարենցավան), Լուսակերտ, Արզնի (այժմ՝ Առողջարան թիվ 1), Գագարին, Գառնի և այլն: Շուրջ 30 տարի եղել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության ընկերության հանրապետական խորհրդի նախագահության անդամ:

1961 թվականին Տիրան Մարությանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր շինարարի կոչմանը, 2002 թվականին պարգևատրվել է Ալ. Թամանյանի անվան ոսկե մեդալով:

Տիրան Մարությանը մահացել է 2007 թվականին:

Տիրան Մարությանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փող. հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահ Մ. Մինասյանի և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Լ. Աբրահամյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՄԱՐԳՍՅԱՆ